

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՊՌՈՖ. Ն. ՄԱՌԻ ՆՈՐ ԳՈՐԾԵՐԸ

Ս. Պետերբուրգի Կայսերական ' Համալսարանի հայագիտութեան պոֆ. պ. Ն. Մառը վերջին ժամանակներս լոյս ընծայեց մի շարք ուսումնական հետազոտութիւններ, վերաբերեալ հին Հայոց ու վրաց գրչագիր յիշատակարաններին, Դոցա համար հարկաւոր նիւթերը անխոնջ երիտասարդ գիտնականը քաղել է Ս. Էջմիածնի հարուստ մատենադարանում, մասամբ էլ Յունաց հռչակաւոր Աթոնի վանքերում, ուր մի քանի անգամ նա անձամբ ճանապարհորդել է այդ նպատակով: Յիշեալ հետազոտութիւնները թուով հինգ հատ են. ա. Բնագիրներ ու Հետազոտութիւններ. գիրք առաջին. ք. — նոյնը — գիրք երկրորդ. գ. Հայաստրական բառարանին վերաբերեալ նկատողութիւններ. դ. Նիւթեր Սրբոց վարքագրութիւնից. մասն առաջին եւ երկրորդ:

Առաջին գրքում հեղինակը խօսում է Եփրեմ Խուրի Ասորու, ծնընդեան տօնելու օրերի եւ Երուսաղէմում առաջին եկեղեցիների հիմնարկութեան մասին: Գործի էութիւնը հետեւեալն է. 1899 թ. պ. Մառը գալով Ս. Էջմիածին, 'ի միջի այլոց, աչքի է անցուցանում մի գրչագիր (ըստ Կարինեանցի № 899) ուր նշանակուած էին Եփրեմի ճառերը՝ հայերէն թարգմանութեամբ, կատարուած ոմն Գէորգի ձեռքով Գեսուն քաղաքում, եւս եւ ասորի բնագիրը: Ուշագրութեամբ քննելով այդ ձեռագիրը, նա շուտով համոզուած է, որ այնտեղ Եփրեմին վերագրուած հատուածները՝ դորան չեն պատկանում: Ապա նկարագրելով գրչագրի հանգամանքները պ. Մառը մէջ է բերում սորա այս յիշատակարանը.

«Յամի վեցհարիւրորդի վաթսնեւորդի չորրորդի (664+551=1215), 'ի թուականութեանս հայոց գրեցաւ գիրքս յաճախապատում լուսաւոր վարդապետութիւն եւ խրատք ոգեւհաջ ազգի ազգի բժշկարանք ախտացելոց հոգով ասացեալ սուրբ եւ երջանիկ լուսաւորչին հայոց Գրիգորի. ընդ նմին եւ ուղղափառ վարդապետութիւն ընդդէմ հերձուածողաց ազգի ազգի աւրինաւք վկայութեամբ սուրբ գրոց սրբոյն Սեբերեանոսի ուղղափառ վարդապետի ասացեալ յաւգուտ եւ 'ի չափ ուղղադաւան եկեղեցւոյ եւ 'ի կործանումն եւ յամաթ չարափառ հերձուածողաց՝ ի գերահռչական անապատս որ կոչի Ակներ ընդ հովանեաւ սուրբ աստուա-

ծածնիս եւ սուրբ առաքելոցս հրամանաւ երիցս երանեալ հաւրն թորոսոյ եւ այլ միակամ եւ միախորհուրդ եղբայրութեանս ձեռամբ Պետրոսի փցուն եւ անպիտան դրչի։ 'ի թագաւորութեանն հայոց Լեւոնի յաղթողի եւ բարեպաշտի եւ 'ի հայրապետութեանն տեառն Յոհանիսի հայոց կաթողիկոսի։»

Այս ձեռագրում, նկատում է իւր կողմից պ. Մատը, չկայ Գ. Լուսաւորչին վերագրած Յաճախապատումը։ քայց դորա փոխարէն Սեբեւրեանսի եւ յիշատակարանի մէջ կան երկու հատուածներ, որոնց մասին չէ յիշուում յիշատակարանում։ Դոքա գրեւած են այլ գրով, որ տարբերում է թէ բուն բնագրի եւ թէ յիշատակարանի գրերից. երկու հատուածներ եւս վերագրում են Նփրեմ Ասորուն եւ իբրեւ թարգմանութիւն ասորերէնից։ Երկրորդ եւ աւելի կարճ հատուածի վերջը մենք կարգում ենք հետեւեալն. «ՁԳէորդ մեղապարտ յիշեսջիք մեղաց թողութեամբ 'ի Գս., որ զայս հանդիսաւոր ճառս թարգմանեցի 'ի քաղաքս Գեսուն վասն սիրոյ եւ խաղաղութեան... Եւ Վահրամ (Վահրամայ) ողորմեսցի տր, ած. եւ ծնողաց նորա. յիշեայ Գս. ած. զՅակոբ որ փափազանաւք ստացաւ զսա 'ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց։»

«Ձսուրբ եւ զպատուական եւ զաստուածահաճոյ հայրն զԹորոս զԱկանց անապատին առաջնորդն յիշեսջիք 'ի Գս. որք կարդայք կամ ընդաւրինակէք եւ զծնաւդս նորա. եւ որ յիշէ յիշեալ եղիցի։»

Եւ այս երկու հատուածները, շարունակում է պ. Մատը, գրուած ու ներմուծուած են Ակներ անապատում հ. Թորոսի օրերում, որ ապաւարել է բուն գրչագիրը XIII դարու առաջին քառորդում, Նոյն ժամանակի վրայ են ակնարկում նաեւ գրչագրի ուղղագրական առանձնայատկութիւնները, որ յատուկ են առհասարակ կիլիկեան շրջանի այսինքն միջին դարուց հայ մատենագրութեան. օրինակի համար՝ անգեալ, մանգանց, ընգեցին, ընդիր փոխ. անկեալ, մանկանց, ընկեցին, ընտիր. ապրիէլի, զսգալի, քարամք փոխ. ապրիլի, զզգալի, քարամք. 2 տառի յապաւուռն խառն ու հոլովման. օր, ասորոյ, հոգով, որդոյ, եկեղեցոյ եւ այլն։ Երկրորդ հատուածը անվաւերական պատմութիւն է առաջին եկեղեցիների հիմնարկութեան մասին. իսկ առաջին հատուածը ծննդեան տօնելու օրերի մասին է խօսում. դա իմ հետաքրքրութիւնը չարժեց, նկատում է գիտնականը, այն պատճառով, որ դորա մէջ բերուած են հատուկտորներ ասորական բնագրից հայոց ծառերով։ Տառադարձութեան քանի մի թերութիւնները ցոյց են տալիս, որ ձեռագրիս մէջ այս բնագիրը ներմուծողը ինքն թարգմանիչն չէ. դու ցէ, ծննդեան վերաբերեալ հատուածը այդ հետաքրքիր թարգմանութեամբ յաճախ էր ընդօրինակում, Յամենայն դէպս մեր թարգմանութիւնը կատարուած է ոչ անագան քան XIII դարու առաջին քառորդն, որին վերաբերում է գրչագիրը, եւ ոչ աւելի հին քան XII դարն, երբ մենք կարող ենք ենթադրել,

Թէ հայը, ներկայ հանգամանքներում ոմն Գէորգը, Թարգմանում էր ասորերէնից Քեսնում: Այնուհետեւ իւրաքանչիւր հատուածի բովանդակութեան մասին պ. Մառը խօսում է առանձին:

Ա. Մենդեան *sollehtu* օրերը:

Հայոց գրականութեան մէջ ծննդեան տօնը բնականաբար մշտական վիճաբանութեանց առարկայ էր. Հայերը ծնունդը տօնում են ոչ միեւնոյն օրը այլ քրիստոնէից հետ: Հայ գրչագիրների ժողովածուների մէջ, պէտք է ենթադրել, կը գտնուին դեռ շատ հատուածներ, նուիրեալ այս առարկային եւ ճման մեր յիշատակարանին: Վերջին դէպքում նշանաւոր է Կարապետ վ. Մկրտչեանի հրատարակած հատուածը «Վկայութիւնք վասն ծննդեան Քրիստոսի եւ մկրտութեանն» (Արարաց, էջ 49-52. Ս. էջմիածնի մատենադարանի գրչագրի XV դարու): Կարապետ վարդապետի այս ժողովածուի հեղինակաւոր անձանց թւում, որոնք վերկայում են, թէ Քրիստոսի ծնունդը ու մկրտութիւնը կատարւում էր մի օրում՝ Յունվարի վեցին, վերջինն է նաեւ մեր Ներսէս Շնորհալիւի ('ի հաւատոյ թղթին Ներսէսի վերջնոյ Հայոց կաթողիկոսի, որ առ Մանիլ Թագաւորն Յունաց): Շնորհալու կարծիքը, արտայայտուած 1165 թ. նորա հաւատոյ թղթում, մեծ հռչակ էր վայելում Հայերի աչքում, ուստի պ. Մառը ենթադրում է, թէ Քրիստոսի ծննդեան եւ Մկրտութեան նուիրեալ վկայութիւնների ժողովածուն կազմուած պիտի լինի անմիջապէս Ներսիսի հաւատոյ թղթի հրատարակութիւնից (1165) յետոյ, եթէ միայն վերջինս յետոյ չէ աւելացրած. այդ դէպքում ժողովածուի յօրինումն էլ պիտի յետ մղուէր 1165 թուականից, այն ինչ Արարացում արդէն շահագործուած է մեր յիշատակարանը հետեւեալ խորագրի տակ լի հարցաքննութեանց ասորոց վարդապետաց: Այդ հարցաքննութիւնները կարծօրէն երկրորդում են մեր սոյն յիշատակարանի այն տեղը, ուր խօսուում է Մենդեան փոխադրութեան մասին Յունվարի 6-ից Դեկտեմբերի 25-ն իրր գիմադրութիւն հեթանոսական տօնին: Սակայն քաղուածքում կայ նաեւ մի էական յաւելուած, որ հետեւեալն է. օգի յրպէս երկու բնութիւնն Աստուծոյն եւ մարդոյն միացան անշփոթ (յանձին Քրիստոսի), նոյնպէս եւ երկու տաւնքն 'ի մի հաստատեցան 'ի լիւնիլ հաւատ եկեղեցւոյ սրբոյ»: Այն իրողութիւնը, թէ մեր յիշատակարանը շահագործւում էր XII դարու կիսում, կրկին համոզում է մեզ, թէ դորա հայերէն Թարգմանութիւնը այն ժամանակ գործ էր ածւում եւ առհասարակ մօտենում է Թարգմանութեան թուականին, որ որոշուած են ձեռագրի տեղեկութիւնները:

Բուն յիշատակարանը, հարկաւ, չէր կարող գոյութիւն ունենալ սրբոյն նփրեմի ժամանակ այն միակ պատճառով, որ յիշեալ հայրը

պատկանում էր «այն եկեղեցական մատենագիրներին, որոնց չէր գիպել հռովմայական տօնն Մենդեան (Դեկտ. 25) դորա ծագելու պատմութեամբ հանդերձ, թէպէտ եւ նոցա թուում նա վերջիններից մէկն է (Bratke, Der Tag der Geburt Christi in der Ostertafel des Hippolytus, Jahrb. für Protest. Theol., XVIII (1892) էջ 452): Երկս այս մտքով անվաւերական ճանաչելով, մենք, սակայն, հիմք չունինք կասկածելու դորա ասորական ծագումը: Լեւելին կասենք, թէեւ սբ. Եփրեմը չէր կարող խօսել Մենդեանի հռովմայական տօնի մասին, բայց այն ինչ որ ասում է մեր սոյն բնագրում Տեսաոն երկրային ծննդեան մասին Յուսովարի վեցին, հաստատում է ասորոց հօր բուն գրուածքներից, որտեղից պ. Մաւր բերում է մի քանի օրինակներ: Այսպէս թէ Եփրեմը, շարունակում է նոյն գիտնականը, հատուածը պատկանում է այնպիսի անձին, որ տեղեակ էր Եփրեմի վարքագրութիւններին եւ հաւանական է կարծել, որ թարգմանութիւն է ասորոց լեզուից:

Մենդեան տօնի խնդիրը հաւասարապէս ալէկոծում էր թէ Ասորոց եւ Հայոց եւ ասորական գրականութեան մէջ դա տարբեր կերպով է լուսաբանւում: Ապա պ. Մաւր նկարագրում է յիշեալ երկու ազգերի մէջ տեղի ունեցած վէճերը այս առթիւ եւ յարում է՝ «Ինչքան էլ ծանրակշիռ լինի այս եկեղեցական խնդիրը, պէտք ասել, որ ես հետաքրքրուեցայ ասորական-հայկական յիշատակարանով յատկապէս այն պատճառով, որ դորա մէջ մենք առաջին անգամն ենք հանդիպում ասորական բնագրի Հայոց տառադարձութեամբ: Բայց սոյն դէպքում եւս ցանկալի է իմանալ «Եփրեմեան» պատասխանների ասորական բնագրի թուականը: Դորա լուսաբանութեան համար մենք ունինք կողմնակի ապացոյցներ, որոնք իրենց նշանակութեամբ համապատասխանում են ստոյգ վկայութիւններին: Արդարեւ, եթէ յիշատակարանը 'ի սկզբանէ գրուած է եղել ում եւ իցէ ձեռքով ասորերէն, պէտք է կարծել, թէ դա շատ հին ա'յն ժամանակի գործ է, երբ Ասորիները տաճարին յարուած չէին Դեկ. 25-ի հռովմայական տօնին: Կարելի էր ենթադրել, թէ նա վերաբերում է Եփրեմի ժամանակին (+ 373). եթէ Դեկտեմբերի 25-ը ասորական Արեւելքում (Անտիոքում) առաջին անգամ տօնուեցաւ 376 թ. (ըստ ստուգադոյն հաշուի Usener-ի, 378 թ.), այն ժամանակ հռովմայական տօնի մասին լուրերը կարող էին մուտ գործել Ասորիք աւելի առաջ եւ չփոթել նաեւ Եփրեմի աշակերտներին: Այստեղից ծագում են գիմումներ ուսուցչին տարակուսանքը փարատելու եւ նորա բացատրութիւնները, որ մեր յիշատակարանի բովանդակութիւնն են կազմում: Մեր յիշատակարանը ըստ ոճին Եփրեմի գրուածք չէ, այլ նորա բացատրութիւնների անանունն արձանագրութիւնն է: Սակայն կայ մի հանդամանք, որ չէ վկայում յօգուտ յիշատակարանիս հնութեան. մի կողմ թողնելով Եպիփանոսին, որ օգտուելով Եփրեմից չը գիտէ Դեկ. 25-ի տօնը, կարեւոր

է մեր յիշատակարանի բնագրի հեղինակի վկայութիւնը, թէ շատ եկեղեցիներ տօնում են Մնունդը Դեկ. 25-ին եւ թէ ինքն ասորի-հեղինակը, ինչպէս երեւում է, հակուած է Յունվարի 6-ի տօնին: — Փոքր ինչ վերը պ. Մառը ասել էր (էջ 19), թէ այժմ կասկած չկայ, որ միայն Հայերն են հաւատարիմ մնացել քրիստոնէական եկեղեցու հնազոյն սովորութեան, տօնելով Մնունդը Յունվարի 6-ին, թէ մինչեւ IV դարու կէսն առհասարակ ոչ մի տեղ եւ մինչեւ 37/8 թ. Արեւելքում Դեկ. 25-ը չէր տօնում եկեղեցում եւ թէ վերջապէս, Մննդեան տօնն Դեկ. տեմբերի 25-ին ծագեցաւ Հռովմում հեթանոսական Dies Natalis տօնի հետ կապուելով, հեթանոսական հանդիսին դիմադրելու համար քրիստոնէականով: յաւիտենական քաղաքից այս կարգադրութիւնը տակաւ տակաւ տարածուեցաւ բոլոր քրիստոնեայ երկիրներում: Այն ինչ հռովմայական տօնը Նփրեմի օրերում ընդունված չէր ոչ զբացի երկիրներում, ոչ էլ առհասարակ շատ եկեղեցիներում: Կ. Պօլսում դա երեւեցաւ. 379 թ., Կապադովչիայում 382թ., Նգիպտոսը ընդունեց V դարու սկզբում, իսկ Պաղեստինէ շարունակում էր հետեւելու հին սովորութեան: Այս պատմական ստուգութիւնից պարզ է, որ մեր յիշատակարանը զտար է թէ Նփրեմի ժամանակից եւ թէ նորա գրականական գործունէութեան վայրից: Դոնէ ոչ Մծբինը, ոչ Նդեսիան չեն մտնում այն երկրի շարքը, որ միակ պաշտպանում էր հին սովորութիւնը, երբ չորս կողմում ներմուծած էր հռովմայական տօնը: Այդպիսի երկիրը Պաղեստինէն էր, որ դեռ V դարու երկրորդ տասնեակում պահպանել էր Մննդեան եւ Մկրտութեան տօնելն Յունվարի 6-ին, որով լուր վրայ դարձրեց հռովմայական տօնի կուսակիցների յարձակումները (Usener. էջ 322), 'ի վերջոյ հռովմայական կարգը այտնեղ էլ հաստատուեցաւ նախ՝ սահմանափակ կերպով, ապա լիովին Երուսաղեմի առաջին հայրապետ Յորենալի (425-458) օրերում: Վերջին իրողութեան արձագանքը մենք տեսնում ենք «'ի թղթոյն Դրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի, զոր գրեաց յԵրուսաղեմայ 'ի Հայք» (տե՛ս Արարատ, էջ 50-51. 1896թ.) Յենլով աւելի ստոյգ տեղեկութիւնների վրայ, ասում է պ. Մառը, բնական է եղրակացնել, որ մեր յիշատակարանի ասորական բնագիրը ծագեցաւ Պաղեստինէյում մօտաւորապէս V դարու կիսում: Արդ, էջմիածնի ձեռագիրը (XIII դարի սկզբան) պահպանել է մեղ հայերէն թարգմանութեամբ, մասամբ միայն հայ տառադարձութեամբ XII դարի կիսի՝ ասորական յիշատակարանը V դարի կիսի: Ինչպէս յետոյ երեւեցաւ, դա բացառիկ դէպք չէ, երբ Հայոց զորչափրներում հանդէս է գալիս ասորական բնագիր (1) հայերէն տառադարձութեամբ: Նոյն երեւոյթը կրկնւում է մի այլ երկասիրութեան

(1) Ինչ պատահել է տեսնել Լազարեան ձեմարանի մատենադարանի մի հայ ձեռագրում նաեւ յոյն բնագիր, բայց յոյն գրերով: Ման. Մ. Շ. :

վրայ, այս անգամ, կարծես, Եփրեմի բուն բնագրի վրայ «Փրկչի շարականի», որ իմ ձեռք ընկաւ Էջմիածնի մի գրչագիր «Տօնապատճառ»-ում (1704թ)»։ Այստեղ գիտնականը նկարագրելով այդ ձեռագիրը ու դորա հանգամանքները, 'ի միջի այլոց, բացատրում է «շարական» բառի ծագումն։ Հերքելով բառիս եբրայական «շիր» եւ արաբական جود բառերից ծագելն, նա կարծում է, թէ «շարական» բառը, հաւանական է, որ յառաջացել է ասորական «շահրա» բառից, ուր նուազ կոկորդային կամ հագագային ու սովորաբար կորչում է հայերէնում։

Բ. Առաջին եկեղեցիների հիմնադրութիւնը Երուսաղէմում

Երկրորդ հատուածը, որ առաջարկւում է իբր թարգմանութիւն ասորերէնից, ասորական բնագիր չէ բովանդակում եւ, պ. Մառի կարծիքով, ինքնուրոյն հայկական անվաւերական գրութիւն է եւ զուրկ չէ պատմական-գրական նշանակութիւնից։ Հեղինակը խօսելով Տրդատի դարձի մասին, հաստատում է, թէ Հայոց թագաւորն էլ Մեծին Կոստանդիանոսի նման իւր անբուժելի հիւանդութիւնից բժշկուել է սաւաղանով, Ագաթանգեղոսի Պատմութեան հետազօտելու միջոցին գիտական գրականութեան մէջ խնդիր էր արծարծւում, թէ Տրդատի խոզի կերպարանք ստանալն արդեօք յետին ժամանակի խմբագրութեան առանձնայատկութիւնը չէ՞ եւ թէ այդ աւանդական մանրամասնութիւնը արդեօք չէ՞ փոխարինում ճշմարիտ իրողութիւն Տրդատի ծանր հիւանդութեան (Տաշեան․ Ագաթանգեղոս, Վիեննա 1891թ)։ Մեր անվաւերական գրութեան յօրինողն, ինչպէս երեւում է, ծանօթ էր այդ խմբագրութեան, որ, պէտք է կարծել, երկար ժամանակ պահպանուել էր։ Մեր յիշատակարանի մի առանձին քաղուածքը յայտնի էր նաեւ Վարդանին, Հայոց XII-XIII դարի հեղինակներից մէկին, որ գրել է Ներքող երիցս երանեալ Գրիգորի Պարթեւի, Լուսաւորչի Հայաստան աշխարհի (ՄՀ․ V․ էջ 39) -82, «դարձեալ պատմում են», կարդում ենք այստեղ (էջ 78), թէ ինքնակալ Կոստանդիանոսը եւ Տրդատը երկու պապերի (sic) Գրիգորի եւ Սեդրեասորոսի հետ Հոռովմից եկան Երուսաղէմ եւ վիճակով բաժանեցին տէրունական սուրբ տեղերը․ Հայերին բաժին հասաւ Մնարքը, Դողգոթան, ուր Մկրտիչը եւ ուր Յակոբը, »

Այսպիսի անվաւերական գրութիւնների ծագման նպատակը պէսպէս քրիստոնեայ համայնքների վիճաբանական հողի վրայ Երուսաղէմում շատ պարզ է։ Ոչ պակաս ակներեւ է, որ յետին ժամանակների անվաւեր գրութիւնները, եթէ չահագործուած չեն յայտնի Դաշանց Թղթի մշակութեան միջոցին, գոնէ սերտ կապուած են դորա հետ։ Ուստի պ. Մառը կարծում է, թէ այս գրուածքը թարգմանութիւն չէ, այլ ինքնորոյն գործ է, վերաբերեալ հայ գրականութեան կիլիկեան շրջանին ։

Պ. Մառի վերոյիշեալ երկի երկրորդ գիրքը, նաեւ «Նիւթեր Սըբ-
բոց վարքագրութիւնից մ. I եւ II» նուիրուած են Վրաց գրականու-
թեան: Միայն «Նիւթեր»ի առաջին մասում մենք տեսնում ենք վրացե-
րէն լեզուաւ հետեւեալ վկայարանութիւններ. 1. Սբ. Վարդանայ. 2. Սբ.
Աստվմայ. 3. Սբ. Սուքիասեանց. 4. Մահ Սահակայ Պարթևի. 5. Նա-
հատակութիւն Շուշանկան: 6. Նահատակութիւն Հայոց հայրապետաց
Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի եւ Դանիէլի, որոնք,
անկասկած, հայերէնից թարգմանուած պիտի լինին:

Վերջապէս Հայ-ասորական բառարանին վերաբերեալ նկատողու-
թութիւնների մէջ յարգելի գիտնականը «Վիշապ» բառի ստուգաբանու-
թիւնը անեկուց յետոյ, իբր հերքումն Hoffmann-ի կարծեաց, խօսում
է հայերէնից-արաբերէն թարգմանութիւնների մասին, որոնց ապացոյց-
ներից մինն է Աղուեսագրքի արաբական թարգմանութիւնը كتاب امثال
الثعالبي (տե՛ս Մառի ընդարձակ քննութիւնը, ուսեւերէն, Ժողովածոյ առա-
կաց Վարդանայ. էջ 1-54). երկրորդ թուղթ Պօղոսի առ Կորնթացիս եւ
Կորնթացւոց առ Պօղոս, իսկ այժմ պ. Մառը զոցա վրայ աւելացնում է
մի երրորդը, որ գտել է Աթոնի վանքում: Դա նոյն Առաքելի արաբա-
կան բնագիրն է, որ ինչպէս երեւում է ձեռագրի հայերէն յիշատակա-
րանից, ապսպարել է մի ոմն պարտաւոր ըիւրուց քանքարաց, թու-
մայ ուսումնական, «որ էր յԱտրպատական նահանգէ, 'ի մասնէ Գող-
թնեայց, 'ի գեղջէ Վանանդայ: Պատճառանօք իմն եկաւորեալ 'ի վիճա-
կըն Կիւղիկոյ (իմա՛ — Կիլիկիոյ), յամենավայելուչ քաղաքն 'ի Հալապ,
եւ հտ գրել զայս կտակ հոգէկիր առաքելոցն սրբոց, 'ի հրճուանս անձին
իւրոց բազմավիրի» եւ այլն:

Ամբողջ յիշատակարանը պ. Մառը, իրան յատուկ ճշտութեամբ,
թարգմանել է ուսեւերէն, այնքան ճիշտ որ «սրբազան» բառը թարգմա-
նել է «svyatorodnogo», այն ինչ մինչեւ ցայժմ ընդունված էր թարգմա-
նել svyatoy եւ այլն:

Մ. ՇՈՎՐԵԱՆ

Փետրվար 1901թ.

Մոսկվա:

×